

2881

С.1930/1696

ԽԱՐԿՈՎԵՐՐ


ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԶ

«ԽԱՐԿՈՎԵՆՏՐԻ» ԲՐԱԽԱՆՁՐ, ՎՈՐ ԲԱՎԱՆՈՎՐՅՈՒՆ և ԱՏԱԳԵԼ
ԽՍՀՄ Կոլխոզկենտրոնի կողմից

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈԽՎԱՆ

1930



30.554

Г 21262
338.16
и-59

18 MAY 2013

17 FEB 2010

Ա. ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ
ԲՐԻԳԱԴՆԵՐԸ

Վորպես կանոն, բրիգադները կազմակերպվում են իրար հետ կապված մի շարք աշխատանքների համար: Այդպես, որինակ, խոտհավաքի բրիգադը պիտի խոտը հնձի, փողխի, բլուլի և դեղ դնի, Այնպիսի աշխատանքների համար, ինչպես, որինակ, ցել անելն ե, վարողների մի բրիգադ ե կազմվում, յեթե դրա հետ միաժամանակ ցաքան չի արվում: Խսկ յեթե ցել անելու հետ միաժամանակ ցաքան ել պիտի արվի, այդ դեպքում ցել անողների բրիգադը կազմվում ե վարողներից և ցաքանողներից:

Բրիգադներ պիտի կազմել աշխատանքի պլանը կազմելուց հետո միայն: Այդ պլանի մեջ պիտի նախատեսնվի, թե բանվորական և քարշի ուժ վերքան կա և վերքան ե պահանջվում, նաև, թե աշխատանքներն ինչ ծավալ ունին և ինչ ժամանակամիջոցում պիտի կատարվեն:

Բրիգադի կազմակերպումը կայանում ե նրանում, վոր վորոշ հողամասի վրա պլանով նշված աշխատանքները կատարելու համար վորոշ թվով բանվորներ և գյուղատնտեսական ինվենտար (կենդանի կամ քենաշական քարշով) ե ընտրվում:

Главлит А-72761 Заказ № 1897 Тираж 4000 экз.
Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ОСТОРОЖЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Միենույն կուլտուրայի մեծ մասսիվներում ցանկալի յե վոր միենույն տարածությամբ բանվորական հողամասեր նշվեն ու կազմվեն: Յերբ բրիգադների համար հողամասերն արդեն վորոշված են, պետք ե բրիգադներ կազմակերպել ու բուն գործին ձեռնարկել:

Ամենից առաջ դաշտավարական ճյուղի վարիչը (դաշտավարը) կամ այդ գործի համար ջոկված վարչության անդամը՝ կոլտնտեսության ակտիվի ողնությամբ՝ կոլտնտեսության միանգամայն փորձված անդամների միջից նշում ե բրիգադիների կազմը, ապա բրիգադիների հետ միասին ձեռնարկում ե բրիգադի բանվորների ընտրության գործին: Մինչ այդ պետք ե արդեն ըստ մասնագիտության հաշվառված լինին կոլտնտեսության բոլոր աշխատունակ անդամներն ու դեռահասները (գեռահասներ են համարվում 14-ից մինչև 16 տարեկան յերկու սեռի անձինք). Բանվորների ընտրություն կատարելիս պետք ե նկատի առնվի նրանց ֆիզիքական վիճակը, նրանց հմտությունը, ըստ վորում պետք ե հաշվի առնվեն նաև իրենց, բանվորների ցանկությունը: Բրիգադի մեքենաների կազմը ըստ կարելույն միենույն սիստեմի և միենույն տիպի մեքենաներից պիտի լինի, իսկ տրակտորները միենույն ուժի պիտի լինեն:

Յուրաքանչյուր բրիգադին առանձին հողամաս ե հատկացվում, վորի վրա պարտավոր ե նա իր ժամանակին կատարել ու վերջացնել իրեն հանձնարարված աշխատանքը: Այն բրիգադը, վորն իր հողամասի աշխատանքը վերջացնում ե վորոշված ժամանակից առաջ, պետք է ողնության ուղարկվի յետ մնացած բրիգադ-

ներին: Աշխատանքի բաշխումը բրիգադների միջև կատարվում ե նախորոք հաստատված աշխատանքի պլանի համաձայն:

Բրիգադի ներսում առանձին բանվորների միջև հնարավոր թյուրիմացություններից և անհամաձայնություններից խուսափելու համար՝ պետք ե արտադրական խորհրդակցությունների մեջ և ընդհանուր ժողովներում, աշխատանքներից վոչ պակաս քան մեկ յերկու շաբաթ առաջ, քննարկել ինչպես բանվորների կազմը, նույնպես և աշխատանքի ծավալն ու կատարման ժամանակամիջոցը, այլև գյուղատնտեսական գործիքների կոմպլեկտը: Նախ քան աշխատանքների ծավալը և կազմը քննարկելը, բրիգադին հանձնվում ե մանրամասն մշակված ծրագիրը, վորի մեջ ցույց ե տրվում բանվորների, գյուղատնտեսական գործիքների, քարշի քանակը, աշխատանքի կատարման ծավալն ու ժամկետը:

Բրիգադը ղեկավարում ե բրիգադիրը, իսկ բոլոր բրիգադների աշխատանքների ընդհանուր ղեկավարությունն ու հակողությունը դաշտում մնում ե դաշտավարի ձեռքում: Նա համաձայնեցնում ե բոլոր բրիգադների գործողությունները: Հարկ յեղած ղեպքում նա մարդկանց ու ինվենտարի վերաբաշխում ե կատարում առանձին բրիգադների միջև:

I. ԽՈՏՀՈՒՆՁԻ ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խոտհավաքի կամպանիան հետևյալ մոմենտներն ունի՝ ա) խոտհունձ, բ) խոտի ցրում՝ չորանալու համար, գ) փոշխով հավաքել, դ) բլու անել, յե) խոտը



58404-62

տեղափոխել, զ) դիզել։ Այնվայրերում, ուր խոտը խուրձ են կապում — այդ աշխատանքներին ավելանում են նաև խոռոմելը, իսկ բլուլի փոխարեն բարդոց են դնում։

Այս աշխատանքները կատարելու համար պետք է մի բրիգադ կազմել, վորի մեջ պիտի մտնեն խոտ հնագողների, խոտ ցրողների, փոցխողների, բլուլ դնողների, խոտ տեղափոխողների և դեղ դնողների խմբակները։ Այստեղ, ուր խոտը խրձում են, այդ աշխատանքներին ավելանում են խոռոմ անողների խումբը, իսկ բլուլ դնողների խմբի փոխարեն բարդոց դնողների խումբ ե կազմվում։ Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար նպատակահարմար ե խոտհավաքի կամպանիայի բրիգադում հետեւյալ խմբակները կազմել — ա) խոտ հնագող խմբակ, բ) խոտ ցրող, փոցխող, բլուլող (բարդոց դնող, ինչպես և խոռոմող) խմբակ (խոտ չորացնող խմբակ) գ) խոտ տեղափոխող խմբակ, դ) դեղ դնող խմբակ։

Խոտ ցրելու, փոցխելու, բլուլելու (բարդոց դնելու, խոռոմելու) համար մի խմբակ ե կազմվում հետեւյալ նկատառություններով։ Խոտ ցրելը խոտհավաքի կամպանիայի շատ պատասխանատու մոմենտն ե հանդիսանում։ Նայած յեղանակին, խոտը հեշտությամբ կարելի յե հարկ յեղածից ավելի չորացնել, վրայից անցկացնել, վորից փոցխելու և բլուլելու (խոռոմելու և բարդոց դնելու) ժամանակ խոտի ամենասանդարար մասերը կփշրվեն, կթափվեն ու դաշտում կամ մարգագետնում կմնան։ Իսկ անձրևային յեղանակին խոտը կարող ե լավ չչորացվել, թաց հավաքվել (խոռոմվել), վորից նույնական խոտը կորցնում ե իր վորակը։ Դրա համար ել խոտ ցրելու, փոցխելու և բլուլելու (խոռոմելու,

բարդոցելու) առանձին խմբակներ կազմելու դեպքում հետեւյալ յերեսությներն են հնարավոր։ — Լավ, պարզ յեղանակին խոտ ցրող խմբակը, նայած խոտի խտության և մարգագետնի կատեգորիային (ցանովի, բնական), կարող ե իր աշխատանքը յերկու-յերեք անգամ ավելի արագ կատարել, քան նախատեսնաված ե պլանով։ Այդպիսով աշխատանքը վերջացնելուց հետո նա կարող ե պարագ մնալ այն ժամանակ, յերբ փոցխողները և բլուլ դնողները (խոռոմողներն ու բարդոց դնողները), վորոնց աշխատանքի ծավալի վրա յեղանակը չի ազդում, զբաղված են։ Դա աշխատողների մեջ դժգոհություն առաջ կբերի։

Կարող ե այլ յերեսություն տեղի ունենալ. — փոցխոտներն ու բլուլ դնողները (խոռոմողներն ու բարդոց դնողները) ստիպված կլինեն, վորպեսզի խոտը չթացանա, շտապ փոցխել ու բլուլ դնել (խոռոմել և բարդոց դնել), իսկ խոտ ցրողների հատուկ խմբակը այդ դեպքում չի աշխատի, վոր դարձյալ անդամների միջև դժգոհություն առաջ կբերի։ Այս պատճառներով ել նպատակահարմար կլինի, յեթե այդ յերեք գործողությունների կատարումը մի խմբի հանձնվի, վորը լավ յեղանակին խոտ ցրելուց անմիջապես հետո հաջորդ գործողությունները կկատարի — կփոցիք և բլուլ կդնի (կխոռոմի և բարդոց կդնի), իսկ անձրևայ յեղանակին, նա խոտ ցրելը դադարեցնելով, շտապ կերպով կանցնի փոցխելու ու բլուլ դնելու (խոռոմելու և բարդոց դնելու) աշխատանքին։ Այդպիսով բոլոր յերեք գործողությունները կատարելով, խմբակը կարող ե զգալի չափով խտացնել իր բանվորական որը և բարձրացնել իր աշխատանքի արտադրողականությունը։

Խոտի տեղափոխությունն և դեղ դնելը, նայած մնացական հնարավորություններին և դեղի տեղերին, կարելի յե կատարել այն ժամանակ, յերբ աշխատանքները քիչ թեթևացած կլինեն: Սակայն վորպես կանոն պետք ե աշխատել, վոր խոտհավաքի բոլոր աշխատանքներն ըստ կարելույն շուտ վերջանան: Դեղ դնող առանձին խմբակներ պիտի կազմել, վորով հետև դեղ դնելը, առանձնապես յեթե դեղը մեծ է, մեծ վարժություն ե պահանջում անկյունի և կողքերի բանվորներից:

Խ Ո Տ Հ Ն Չ Ո Ղ Խ Մ Բ Ա Կ

Խոտ հնձող խմբակները տարբեր չափերի կարող են լինել, նայած հնձող մեքենաների տեսակին և քարշի բնութին (կենդանի, մեքենայական): Դրան համապատասխան կարող ե լինել տրակտորային, ձիով կամ ձեռքի հունձ:

1. Տ Ր Ա Կ Տ Ո Ւ Թ Ի Ն Հ Ո Ւ Ն Զ

Տրակտորային հնձի ժամանակ տրակտորների թիվը խմբում վորպես կանոն 10-ից ավելի չպիտի լինի: Դրանք պիտի աշխատեն յերկու հերթով, 10 ժամվարանվորական որով, չհաշվելով հանգստի և ճաշի ընդմիջումները: Յեթե տրակտորները ձիան խոտհար մեքենաներ, ինչպես և ձիան խոտհանձիչներ ու խուրձկապողներ են բանեցնում, այդ դեպքում նրանց արագությունը պետք ե մի ժամում 3,8 կիլոմետրից (սովորական քաշող ձիան արագությունից) ավելի չինի, վորովհետև ավելի մեծ արագության դեպքում խոտհար մեքենայի և խոտհանձիչի կարիչ ապարատը

կարող ե վսասվել ու կոտրվել: Խոտհունձի համար մեծ ուժի տրակտորներ պիտի միայն բացառիկ դեպքերում գործածել, վորովհետև խոտհունձի ժամանակ տրակտորը մեծ մասամբ լրիվ բեռնավորում չի ստանում:

Խոտհունձի տրակտորային խմբակի արտադրողականությունը հետևյալն է:

ՏՐԱԿՏՈՐԻ ԱՆՈՒՆԸ	ՀԵԿԸ ՄԵԽԱՎԵԼ ԽՄԵՆՀԱՐ Ի	ՀՈՇՎԵՐ ԱՊՈՎ ՄԱՆԱԳՐԻ ՄԵԽՄԵՐԸ	Մ Ի ԽՈՏՀԱՄՄԻ ՊՐ- ՄԱԿԱՐԱԿԱՆ ՀԵՐՄԱՆ- ՔՐՈՒՆ ՄԻ ԹՐՈՎ	Մ Ի ԽՈՏՀԱՄՄԻ ՀԵՐՄԱ- ՆԱԿԱՐԱԿԱՆ ՀԵՐՄԱՆ- ՔՐՈՒՆ ՄԻ ԹՐՈՎ	Մ Ի ՄԵԽԱՎԵՐ Ի Ի Ի Ի ՀԵՐՄԱՆ ՄԵԽՄԵՐԸ	10 ՄԵԽԱՎԵՐ Ի Ի Ի Ի ՄԵԽՄԵՐ ՄԻ ՀԵՐՄԱՆ- ՔՐՈՒՆ ՄԻ ԹՐՈՎ	ՄԵՐՄԵՆ ՀԵՐՄԱՆ- ՔՐՈՒՆ ՄԻ ԹՐՈՎ
«ՖՈՐՁՈՆ» ՏՐԱԿՏՈՐ $10/20$	Տրակ- տորի	240	9,3	2	18,6 հեկտ.	186	372
«ՖՈՐՁՈՆ» ՏՐԱԿՏՈՐ $10/20$	Զիան	137	4,68	3 14	» 140	280	հեկտ. հեկտ.
					հեկ. **		

* Արագությականությունը հաշված ե առի լայնքը շարժման արագության վրա բազմապատկելով ($2,4 \text{ մ.} \times 4,300$), «Փորձոնի» աշխատ. արագությունը հաշված ե մի ժամում $1,03$ հեկտ., իսկ 10 ժամում $10,30$ հեկտ.: Այդ հաշվիմերը արված են բանվորական որվա լրիվ խոտության (առանց դադարի) պայմաններում: Դրանից պետք ե դեռ գցել միջին թվով $10^0/0$ հնարավոր ստիպյալ դադարների համար— $10,30$ հեկտ.: $10=1,03$ հեկտ., $10,30$ հեկտ.— $1,03$ հեկտ.= $9,27$ հեկտ.: Վերջին $9,27$ հեկտարն հենց տրակտորային մի խոտհարի փաստական արտադրողականությունն ե բանվորական 10 ժամյա որում:

** Զիան խոտհարի (տրակտորային քարշով) արտադրողականությունը ևս հաշված ե նույն կերպ, ինչ տրակտո-

2. Զ Ի Ա. Ն Հ Ո Ւ Ն Ձ

Հանձնարարվում ե խմբակի մեջ մտցնել վհչ
ավելի քան 20 խոտհար 40 ձիյով և 20 բանվորով:
Զիյերը պիտի ըստ կարելուցն հավասար ուժի լինեն:
Ընդունելով մի խորհարի արտադրողականությունը՝
137 սանտիմետր առի լայնությամբ՝ 10 ժամյա բան-
վորական որում 4,5 հեկտար, ամբողջ խմբակի ար-
տադրողականությունը հավասար կլինի որական 90
հեկտարի: Այս արտադրողականությունը կարող ե
փոփոխվել, նայած խոտհարքի մակերեսին և ձիյերի
վորակին: Յեթե խոտհարքների տարածությունները
մեծ չեն, խմբակը պետք ե ավելի փոքր չափերի լինի:

3. Զ Ե Ռ Ե Վ Ի Հ Ո Ւ Ն Ձ

Հնձողների խմբակը, խոտի միջակ բարձրության ու
խտության գեպօւմ, հանձնարարվում ե կազմել վոչ
ավելի քան 25 հոգուց: Մի հնձողի միջին արտադրո-
ղականությունը 10 ժամկա բանվորական որում հա-
վասար ե 0,4 հեկտարի, իսկ ամբողջ խմբակինը,
հետևապես—10 հեկտարի:

Յեթե լրիվ (նորմալ) խմբակների (վերոհիշյալ
որինակելի չափերով) բաժանելուց հետո կոլտնտեսու-
թյունը կունենա ազատ ինվենտար, բայց վհչ այն
չափով, վոր հնարավոր լինի ևս մի ամբողջ բրիգադ կազ-
մել, այս գեպօւմ ինվենտարի մնացած մասից պիտի
բային խոտհարինը, այսինքն առի լայնքը բազմապատ-
կած ե կցված մեքենայի շարժման արագության վրա
(1,37 մ. × 3,800 = 0,52 հեկտ. մի ժամում, իսկ 10 ժամում
= 5,20 հեկտար՝ բանվորական որվա լրիվ խտության գեպ-
օւմ. իսկ բանվորական որվա 40% ի խտության գեպօւմ,
փաստական արտադրողականությունը կլինի 4,68 հեկտ.):

մի վհչ լրիվ բրիգադ կազմվի, կամ ել միացվի
այն լրիվ (նորմալ) բրիգադներից մեկին: Իր տնտե-
սական հնարավորություններին համապատասխան՝
նայած թե քանի տրակտոր, վորքան բանող անսպուն
ու խոտհարներ կան՝ կոլտնտեսությունը իմանալով
խոտհարների տարածությունն ու աշխատանքի ժամա-
նակաշրջանը, կարող ե վորոշել հունձի խմբակների
թիվը:

ԽՈՏ ԶՈՐԱՑՆՈՂ ԽՄԲԱԿՆԵՐ

Խոտ հնձող խմբակներին ամրացվում են խոտ չո-
րացնող, փոխադրող և գեղ գնող խմբակները, վորով-
հետև, ինչպես վերև ասված ե, բրիգադները կազ-
մվում են մի շարք այնպիսի աշխատանքների համար,
վորոնք կապված են իրար հետ: Խոտ ցրելու, փոց-
խելու և բլուլ դնելու (խոռոմելու, բարդոց դնելու)
խմբակի մեջ բանվորների թիվը այնքան պիտի լինի,
վոր դրանք կարողանան իր ժամանակին կատարել
խմբակին հատկացված հողամասի վերոհիշյալ աշխա-
տանքները:

Խոտ չորացնող խմբակի թվական կազմի վրա
ազդող գլխավոր պայմաններն են հանդիսանում՝ խոտ
հնձելու ձեւը (արակառային, ձիան, ձեռքի) և ցրելու
ձեւը (ձեռքով, ձիով փոցխելով):

Յեթե վերոհիշյալ բոլոր յերեք գործողություն-
ները (խոտ ցրելը, փոցխելը, բլուլ դնելը) ձեռքով
են կատարվում՝ միջին բերք (20 ցենտներ 1 հեկ-
տարին) ունեցող մի հեկտար խոտհարել $2^{1/2}$ մարդոր
կպահանջի: Զիան փոցխելով խոտ հավաքելիս, պետք ե
առանձին խմբակ կազմել՝ մինչև 10 փոցխից բաղկա-
ցած: Մի ձիանի փոցխերի արտադրողականությունը՝

առի լայնքը 213 սանտիմետր՝ 10 ժամյա բանվորական որում միջին թվով հավասար է 6 հեկտարի, իսկ ամբողջ խմբակինը՝ 60 հեկտարի։ Այդ դեպքում խոտ չորացնող խմբակի մարդկանց թիվը պետք է այնքան լինի, վոր մի որում կարողանա այնքան տարածությամբ խոտ ցըել ու բլուզ գնել, վորքան փոցիսում են խմբակի ձիան փոցիսերը։ Այդ դեպքում միայն վերջիններս լրիվ բեռնավորում կունենան։

ԽՈՏ ՓՈԽԱԴՐՈՂ ԽՄԲԱԿՆԵՐ

(Դեղք խոտհարքի մեջ յեկ բակում դնելու դեպքում)

Խոտ փոխադրող խմբակի կազմը կախված է դեղ դնելու տեղից։ Յեթե խոտը բակ չի տեղափոխվում, այլ խոտհարքում (կամ մոտիկ վարելահողում) է դիզվում, այդ դեպքում խոտ փոխադրելու և դիզելու համար մի խմբակ է կազմակերպվում։ 500 ցենտներ խոտ դիզելու համար միջին թվով պետք է 21 բանվոր 7 ձիյով (քոշակների համար), այսինքն 70—75 ցենտներ՝ յերեք բանվորին և մի ձիան։

Դեղը պետք է մի որում գնել ու վերջացնել։ Վոչ մի դեպքում չի կարելի գեղը չափարաել ու գիշերը թողնել մյուս որը շարունակելու համար։

Իսկ յեթե դեղը պիտի բակում դրվի, խոտ փոխադրելու և դեղ դնելու համար առանձին խմբակներ են կազմվում։ Այդ դեպքում խոտ փոխադրելու և դեղ դնելու աշխատանքները կարող են կատարվել աշխատանքից թեթևացած ժամանակներում, այսինքն վոչ թե անպայման խոտհունձի ժամանակաշրջանում։ Խմբակում սայլերի թիվը, վորպես կանոն, 20-ից ավելի չպիտի լինի, ամեն մի սայլի վրա մի բանվո-

րով։ Խոտ բառնալիս և դատարկելիս խմբակի բանվորները յերկ-յերկու յեն միանում։ Յուրաքանչյուր զույգը պատասխանատու յե իր յերկու սայլերի կանոնավոր բարձելու համար։

Խմբակների թիվը վորոշվում է նայած խոտի բերքին, դիզելու տեղի և խոտհարքների հեռավորության և խոտ փոխադրելու ժամանակի տևողության։ Այդպես, որինակ, կոլտնտեսությունն ունի 30.000 ցենտներ խոտ, փոխադրման ժամանակամիջոցը 10 որ ե, դեղերի տեղը խոտհարքներից 3 կիլոմետր հեռու յե, մի սայլին 5 ցենտներ խոտ և բարձվում։ Այդ դեպքում խմբակների թիվի համար հետևյալ հաշվով պիտի արվի։ — Սի խմբակ մի վոտքին կփոխադրի 100 ցենտներ ($5 \text{ g.} \times 20 = 100 \text{ g.}$), մի որում՝ 300 ցենտ. ($100 \text{ g.} \times 3 = 300 \text{ g.}$), իսկ փոխադրության ամբողջ ժամանակամիջոցում, այսինքն 10 որում, մի խմբակը կփոխադրի 3.000 ցենտներ ($300 \text{ g.} \times 10 = 3.000 \text{ g.}$)։ Հետեւապես 30.000 ցենտներ խոտը փոխադրելու համար հարկավոր է 10 խմբակ 30.000 : 3.000 = 10)։

ԴԵԳ ԴՆՈՂ ԽՄԲԱԿՆԵՐ

Դեգ դնելու աշխատանքները կատարվում են խոտ փոխադրելու հետ միաժամանակ։ Խմբակի բանվորների թիվը կախված է դեղի չափից, խոտ տալու ձերից և խոտ փոխադրելու ժամանակամիջոցից։ Յեթե խոտը ձիով և դեղին տրվում, այդ դեպքում 500 ցենտներանոց մի դեղի համար միջին թվով (յեթե դեղը մի որվումն է դրվում) պահանջվում է 21 մարդ և 7 ձի, այսինքն յուրաքանչյուր 75 ցենտներին՝ 3 բանվոր և մի ձի։

Դեղերը պետք ե ցանկապատել կամ փշոտ յեր-
կաթալարով կամ փայտերով, վոր անասուններից ազատ
մնա դեղը։ Վորպեսզի անձրեխ ջրերը դեղի տակը
չգնան, դեղի չորս կողմը պիտի փոքր առու փորվի։

ԽՈԾ ՄԱԿՐԱԿԱՆԵՐ

Յեթե կոլտնտեսությունն ունի խոտի մամուլներ
և յերկաթալար, այդ դեպքում լավ կլինի, յեթե խոտը
ժամկի։ Մամլած խոտը պահելու և փոխադրելու,
այլև կոլտնտեսության անդամների միջև բաշխելու
համար հարմար ե։

Զեռքի մամուլի վրա պահանջվում ե 4 բանվոր
(փորոնցից յերկուսը հերթով մամուլն են պտտեցնում)։
10 ժամյա բանվորական որում խմբակի արտադրողա-
կանությունը 4—5 տոնն կլինի, ամեն մի կապը
30—50 կիլոգրամ։

Չիան մամուլի վրա պահանջվում ե 2 ձի և 5—6 բան-
վոր։ Բանվորները հետևյալ կերպ են բաշխվում. խոտը
սեղանին տալ — 1 բանվոր, խոտը ընդունող կամերա-
յին տալ — 1 բանվոր, յերկաթալարով շուրջկապ —
1 բանվոր (յեթե մամուլը բարձր ե, կապելու համար
յերկու բանվոր ե պետք), խոտի կապերը տանել ու ան-
ջատիչ տախտակներ դնել — 1 բանվոր, ձիյերը կառավա-
րել — 1 բանվոր։ Ամբողջ խմբակի աշխատանքը բանվո-
րական 10 ժամյա որում մոտավորապես 6—7 տոննայի
յե հավասար։ Յեթե մամուլ ե արվում վահ մեծ ըլուր-
ների մոտ, այդ դեպքում պետք ե մի բանվոր և մի
ձի հատկացնել քոշակներով խոտը մոտացնելու համար։

Մեքենայական շարժիչով աշխատող մամուլի վրա
նույն թվով բանվոր ե աշխատում, ինչ ձիան մամուլի

վրա (կրծատվում ե ձիյերը կառավարող մի բանվորը,
բայց ավելանում ե խոտ տվող մի բանվոր)։ Պետք ե
միայն չոր խոտը մամլել, վորովհետև կիսաչոր խոտը
փշանում և կորցնում ե իր սննդառությունը։

II. ՑԵԼ ԱՆՈՂ ՅԵՎ ՑԵԼԸ ՄԱՔՐՈՂ ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Յել (նախորդ տարում ցանված հողամասերի) անելու
և ցելերը մաքրելու աշխատանքը ըստ ժամանակի գու-
գաղիպում ե հաց հավաքելու ժամանակաշրջանին։
Դրա համար ել աշխատանքի պլանում պիտի նախա-
տեսնի նաև աշնանացանի նախապատրաստական աշ-
խատանքների (ցել անելու և ցել մաքրելու) համար
արտադրողական միջոցներ ու բանվորական ուժ տրա-
մադրելու անհրաժեշտությունը։

ՅԵԼ ԱՆԵԼԸ

Յել ե արվում կամ մեքենայական կամ ել կեն-
դանի քարշով, փորի համաձայն և կազմվում ե բրիգադը։

1. ՏՐԱԿՏՈՐՈՎ ՅԵԼ ԱՆԵԼԸ

Տրակտորների թիվը մի բրիգադում պետք ե միջին
թվով 10-ը լինի՝ գութանների համապատասխան թվով,
փորոնց առի լայնքից ե կախված որական արտադրո-
ղականությունը։ Յեթե տրակտորի ուժը չի թույլ
տալիս գութանի յետելից ցաքան գցել, այդ դեպքում
միաժամանակ ցաքանման համար պետք ե կազմա-
կերպել ցաքանողների խմբակ, բայց այնպիսի հաշվով,
փոր մի որում ցաքանի նույն որում տրակտորային
բրիգադի արած վայրը։

Տրակտորային բրիգադի աշխատանքը պետք է յերկու հերթ կատարվի, յուրաքանչյուրը 10 ժամից:

Տրակտորային բրիգադի կազմն ու արտադրողականությունը հետևյալ հաշիվսերով է վորոշվում (վար ու ցաքան):

ԱՆՈՒՆԸ	ԹԻՎԸ	Ա. ԵՐՊՈՂ ԲՐԻԳԱԴԻ ԱՐՄԱՊՈՂԱԿԱՆ ԱՆՎԵՐԺՅԱՆԸ		Բանվորների թիվը	
		Ա. ԵՐՊՈՂ ԲՐԻԳԱԴԻ ԱՐՄԱՊՈՂԱԿԱՆ ԱՆՎԵՐԺՅԱՆԸ	1 հերթ.	2 հերթ.	
Հիմանացիոնալ արականու 10/20	10	25 հեկտ.	50 հեկտ.	10 մարդ	20 մարդ
Զիյեր (յերկու խմբակներում) *	50	25 հեկտ. (յերկուտակ)	50 հեկտ. (յերկուտակ)	25 «	50 «

2. ԶԻՑՈՎ, ՅԵԼ, ԱՆԵԼԸ

Զիյով ցել անելիս լուծերի թիվը 20-ից ավելի չափանի լինի: Բանվորների թիվը պիտի համապատասխանի լուծերի թիվն (բացի այն դեպքից, յերբ մաճկալից զատ պահանջվում է մի առանձին ձի քշող), իսկ ձիյերի թիվը կախված է այն հանգամանքից, թե գութանը քանի խոփանի յե և առի լայնքը վորքան է:

Յել անելու հետ միասին պետք է նաև ցանքանել, ըստ վորում ցանքանողների խմբակը պիտի այնպես

* Ցաքանը խաչմերուկ, յերկու տակ (2 անգամ) և արգում, զրա համար ել տրակտորային բրիգադի մի հերթի վարած 25 հեկտարը ցաքանելու համար պահանջվում է ձիան մի խմբակ 25 ձիուց, հաշվելով, վոր մի ձին բանվորական 10 ժամաց որում կարող է ցաքանել վի հեկտար: Տրակտորային բրիգադի հետևյալ հերթի համար անհրաժեշտ է ցաքանող ձիյերի յերկորդ խմբակ:

Կազմվի, վոր դա մի որում կարողանա ցանքանել ցել անող խմբակի նույն որում վարած վարը:

ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ

Խմբակի որականությունը	Զիյերի թիվը	Բիուլետենի թիվը	Խմբակի որականությունը
-----------------------	-------------	-----------------	-----------------------

Վարի խմբակը՝ միախոփանի գութանով
առը — 18 սանտիմ.

Վարի խմբակը՝ յերկփոխանի գութանով
առը — 31 սանտիմ.


Ցաքանի խմբակը՝ յերկուտակ «Զիյեր-Զամակով» 2-3 ողակից
10 20 10 20 հեկտար
(յերկուտակ)

Արտադրողականությունը վերցված է միջին ծանրություն ունեցող հողի համար, բանող անասունի նորմալ վիճակում: Յեթե հողային պայմանները թույլ են տալիս մի տակ ցաքանել, այդ դեպքում ցաքանողների խմբակի կազմը, յեթե բանվոր անասունը նորմալ վիճակումն է, պետք է համապատասխան չափով պակասեցվի*:

3. ՅԵԼԻ ՄԱՔՐԵԼԸ

Այս աշխատանքը կարելի յե զյուղատնտեսական զանազան գործիքներով կատարել՝ ատամնավոր և ափսեյավոր ցաքանով, քանազան տեսակի կուլտիվատորներով և գութանոներով (կրկնավարի դեպքում): Լուծերի թիվը բրիգադում 20-ից ավելի պիտի չլինի, իսկ ձիյերի (յեզների) թիվը պետք է համապատասխան

* Աղնանավարի բրիգադներ կազմվում են նույն սկզբունքներով, ինչպես ցել անելու բրիգադներու:



լինի գործադրվող ինվենտարին, Բանվորների թիվը
պիտի համապատասխանի լուծերի թվին:

Որինակ.

ա) 20 յերեք ողականոց ցաքանից բաղկացած բրի-
գագն ունի 40—60 ձի:

բ) 20 ինըթաթանի կուլտիվատորից բաղկացած
խմբակն ունի 40 ձի:

գ) 20 տասից-տասներկու ափսեյավոր ցաքանից
բաղկացած բրիգագն ունի 40 ձի:

դ) 20 յերկխոփանի գութանով (կրկնավարի դեպ-
քում) բաղկացած բրիգագն ունի 40 ձի:

Բոլոր բրիգագներում բանվորների թիվը պետք է
20-ական լինի, այն դեպքերի բացառությամբ, յերք
բացի մաճկալներից ցելի կրկնավարի ժամանակ քշող-
ներ են պահանջվում:

Բրիգագների արտադրողականությունը մի տակի
հաշվով մոտավորապես հետեւյալն ե. ա) ցաքան—
80 հեկտար, բ) կուլտիվատորել—80 հեկտար, գ) ափ-
սեյավոր փոցխով ցաքանել—60 հեկտար և դ) վար—
20 հեկտար՝ բանվորական 10 ժամյա որում*:

III. ՇԱՐՔԱՀԵՐԿ ԲՈՒՅՍԵՐԸ ԽՆԱՄԵԼՈՒ ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շարքահերկ բույսերը (արմատապտուղներ, արևա-
ծաղիկ, յեղիպտացորեն, սոյա, կենափ, բամբակ և այլն)
խնամում են, վոր կուլտուրան կանոնավոր զարգանաւ:

* Խոզանի յերեսավարի (յերեսն առնելու) աշխատանք-
ների կազմակերպումը վոչնչով չի տարբերվում ցելը մաք-
րելու բրիգադի կազմակերպումից, դրա համար ել առանձին
չի հիշում դրա մասին:

Այդ նպատակին հասնում են գյուղատնտեսական գյու-
սատուների դեմ կովելով, վոռոգելով, մոլախոտերը
վոչնչացնելով, հողը փխրելով և մշակող բույսը խնա-
մելով (ծերատում և այլն), Շարքահերկ բույսերի
խնամքի աշխատանքն առայժմս համարյա դեռ չե
մեքենայացված:

Շարքահերկ բույսերը խնամելու բրիգագների կազմը
մոտավորապես 25 հողի պիտի լինի: Բանվորների այս
թիվը հնարավոր ե դարձնում, վոր բրիգագները լավ
հսկի աշխատանքին և միենույն ժամանակ բրիգագնի
հետ միասին ֆիզիկական աշխատանք կատարի: Զիան
կուլտիվատորների բրիգագները 20 լծից ավելի չպիտի
ունենան— բանվորների նույնքան թվով, Զիյերի թիվը
կախված ե գործիքների առի լայնքից ու, միաձի լուծի
դեպքում, կարող ե հասնել 20, իսկ յերկանի լուծի դեպ-
քում՝ 40 ձիու:

Բրիգադի արտադրողականությունը վաղորոք չի
կարող վորոշվել և կախված կլինի ցանքսի մոլախո-
տով ծածկվելու, հողի պնդության աստիճանից և այլ
պայմաններից:

IV. ՀԱՍԿԱՎՈՐ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԲՐԻ- ԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Վորովհետև աշխանանացան հասկավոր հացահատիկ-
ների հավաքման աշխատանքի բնույթը տարբերվում ե
գարնանացանների հավաքման աշխատանքի բնույթից
(աշխանացանի խուրձերը հնձելուց անմիջապես հետո
պիտի կապվեն, այսինչ գարնանացանի խրձերի կապելը
չի ուղեկցվում հունձին), ուստի և աշխանացանի հավաք-

ման բրիգադները պետք ե կազմակերպվեն այն հաշվով, վոր հաջորդաբար կատարվեն բոլոր աշխատանքները՝ հունձը, խուրձ կապելը, խրձերը մոտ բերելը և բարդոցներ դնելը:

Հացահատիկի հավաքման յուրաքանչյուր առանձին աշխատանքի համար պիտի հատուկ խմբակներ կազմակերպվեն՝ հնձվորների, խուրձ կապողների, խրձերը բարդոցներին մոտեցնողների և բարդոց դնողների խմբակներ:

ՀՈՒՆՁԻ ԽԱՐԱԿԱՆԵՐ

Նայած քարշին, հացահատիկի հունձը լինում ե տրակտորային, ձիան և ձեռքի:

1. ՏՐԱԿՑՈՐԾԹԻՆ ՀՈՒՆՁ

Տրակտորային հնձի դեպքում բանվորների թվական կազմը 10 տրակտորի համար կախված է տրակտորի և կցվող ինսլենտարի ուժից: Որինակ «Փորձոն» 10/20 և «ինտերնացիոնալ» 10/20 տրակտորներով յերկու 10 ժամյա հերթի համար պահանջվում է 20 տրակտորիստ և 20 բանվոր՝ խուրձ կապող մեքենայի վրա (յուրաքանչյուր տրակտորային խուրձ կապող մեքենայի վրա մեկական բանվոր): Իսկ «ինտերնացիոնալ» 15/30 և «ջոն-դիր» 15/27 տրակտորներով աշխատելիս, խուրձ կապող մեքենաների վրա պետք ե յերկու անգամ ավելի մեծ թվով բանվորներ դրվին, վորովհետև յուրաքանչյուր տրակտորին այդ մեքենաներից յերկուսն ե կցվում:

Իսկ յեթե տրակտորը աշխատում է ձիան ինվենտարի կցմամբ, այդ դեպքում յուրաքանչյուր հնձող

կամ խուրձ կապող մեքենայի վրա պետք ե դրվի մեկական բանվոր: Բրիգադի արտադրողականությունը կախված է ամբողջ բրիգադի գործիքների առի լայնությունից:

2. ԶԻԱՆ ՀՈՒՆՁ

Հնձող կամ խուրձ կապող մեքենաների թիվը ձիան հունձի դեպքում պետք ե 10-ից ավելի չինի, 20—40 ձիյով և 10 բանվորներով: Արտադրողականությունը կախված է առի լայնքից:

3. ԶԵԽԹԻ ՀՈՒՆՁ

Հնձվորների թիվը խմբակի մեջ 20-ից ավելի չպիտի լինի, ինչպես և խոտհունձի ժամանակ: Խմբակի արտադրողականությունը միջին թվով մոտ 10 հեկտար է:

ԽՈՒՐՁ ԿԱՊՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Աշնանացանների խրձեր կապելը կատարվում է հնձելուն գուգընթաց: Դրա համար ել խուրձ կապողների խմբակը պետք ե այնպես կազմել, վոր նա կարողանա կապել այն բոլորը, ինչ մի որվա մեջ հնձի վորեւ խմբակ (տրակտորային, ձիան կամ հնձվորների խմբակները):

Խմբակի ներսում բանվորները պետք ե յերկու մասի բաժանվեն, դրանցից մեկը պետք ե միայն հավաքի խրձի չափ (մի մետր յերկարություն ունեցող ջովի չափ), իսկ մյուսը միայն կապում ե: Կապելը վերջացնելուց հետո ամբողջ խմբակը միասին բարդոցներ ե գնում: Գարնանացանի խրձեր կապելիս, հնձվորների խմբակին խուրձ կապողների խմբակ ամրացնելու կարիքը վերանում ե, և խմբակի բանվորների թիվը պետք

Ե վորոշվի աշխատանքների արտադրողականությունը բարձրացնելը նկատի ունենալով, — գարնանացանի խրձերի ջովերը վաղորոք ու տրաստելով:

Խուրձ կապող մեքենաների խրձերը բարդոց դնելու համար պետք է ինքնուրույն խմբակներ կազմեն այս հաշվով, վոր մեքենաների որական կապածը խմբակը կարողանա բարդոց դնել:

Խմբակների թվական կազմը վորոշելու համար պետք է ղեկավարվել հետևյալ որինակելի հաշիվներով.

ա) հնձող մեքենայի հնձածը	
խուրձ կապել — աշնանացան 25 խուրձ	Մի
“ “ “ գարնանացան 30 խուրձ	բան-
բ) գերանդիով “ “ աշնանացան 20 խուրձ	վոր
“ “ “ գարնանացան 25 խուրձ	մի
գ) խուրձերը ի մի հավաքելն ու բարդացնելը — խուրզ մեքենայի կապածը 180 խուրձ,	ժա-
ձեռքով կապածը 90 խուրձ	մում

ԶՊՎ. (ԿԵԼ) ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ԽԵՐԲԱԿՆԵՐ

Զով պատրաստող խմբակները, վորպես կանոն, 25 հոգուց ավելի չպիտի լինեն: Այդպիսի խմբակի յուրաքանչյուր բանվորի արտադրողականությունը պիտի մի ժամում 100 ջովից պակաս չլինի:

V. ԲԵՐՔԸ ԾԵԾԵԼՈՒ ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բանվորական և քարշի ուժերի քանակը ծեծելիս փոփոխվում ե—նայած ա) ծեծող մեքենայի չափին ու կոնստրուկցիային, բ) կուլտուրայի բնույթին ու տեսակին (աշնանացան հացահատիկ, գարնանացան հացահատիկ, սիսեռ, կորեկ և այլն), գ) կուլտուրայի վիճակին (չոր կամ թաց), դ) կուլտուրայի բերքա-

տվության (նայած հատիկի և դարմանի քանակին՝ փոփոխվում ե նաև բանվորական ուժի քանակը) և այլն:

Վերոհիշյալ պատճառներից զատ, բանվորների և քարշի կազմի վրա ազդում ե նաև խուրձերը սայլով մոտեցնելու հեռավորությունը:

ԾԵԾԸ ԲԱՐԴ ՄԵՔԵՆԱԿԵՐԸ

Բարդ ծեծող մեքենաների համար բըիդադ պիտի կազմվի հետևյալ որինակելի հաշիվով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒԻՆԸ	8 ուժանոց	10 ուժանոց	12 ուժանոց
1. Մեքենաների տեխնիկական սպասարկում	3	3	3
2. Թմբուկի բանվորներին խուրձ տալը	3—4	4—5	5—6
3. Խուրձերը թմբուկին տալը	2	3	4
4. Մղեղը և դարմանը հեռացնել	6	7	8
5. Մղեղը և այն կլոսել	2	3	3
6. Բանվորներ՝ հացահատիկի պարկերի մոտ	3	3	3
7. Հացահատիկը կլոսող բանվորներ	2	3	3
8. Հացահատիկը մաքրել և տեսակավորել	5	5	6
9. Մեքենայի կողքը մաքրել	1	1	1
10. Կառղաներ	1	1	1
11. Զրկել (մի ձիով)	1	1	1
12. Դարմանի դեղ դնելը (2 ձիով)	7	7	7

Ընդամենը 37 42 45

Բացի այդ, ծեծելու ժամանակ անհրաժեշտ ե բանվորական ուժ ծախսել՝ խուրձերը սայլով մեքենային մոտեցնելու և հացահատիկը սայլով տանելու համար։ Վերջին աշխատանքը պետք ե այնպես կազմակերպել, վոր մի որում հանած հացահատիկը նույն որը փոխադրելու համար պետք յեղած բանվորների և ձիյերի թիվը պետք ե հաշվի՝ նայած հեռավորության, ըստ վորում սայլերը պետք ե հետևյալ թվով վորք անեն։

Մինչև 0,5 կիլոմետր հեռավորության վրա — 10 վորք

«	1	«	«	«	8	«
«	1,5	«	«	«	6	«
«	2	«	«	«	6	«
«	2,5	«	«	«	5	«
«	3	«	«	«	4	«

Ծեծող մեքենայի տեղը պիտի վորոշվի այն հաշվով, վոր դա սպասարկի վհչ ավելի քան 200 հեկտար (2 քառ. կիլոմետր) արտերի։ 15 ցենտներ բերքատվության հաշվով, այդ տարածության հացահատիկը կծեծվի մոտ 10 որում մի հերթով։ Իսկ յեթե տնտեսությունը ծեծող մեքենայի վրա մշտական կազմով բրիգադ ունենալու հնարավորություն ունի, այդ դեպքում մի մեքենայի սպասարկման տարածությունը կարելի յե հասցնել մինչև 900 հեկտարի (9 քառ. կիլոմետրի)։ Այդ դեպքում բարգոցները ամենաշատը $1\frac{1}{2}$ — 2 կիլոմետր հեռավորությունից կփոխադրվեն մեքենայի մոտ, յերկներթ ծեծի դեպքում, դա կտեի 20 որ, 15 ցենտներ բերքատվության հաշվով։ Դարմանը և մղեղը պետք ե վհչ մեծ դեղեր արվին այն դեպքում միայն, յերբ դրանք բաշխվելու յեն կոլտնաեսության անդամների միջև։

ԶԻԱՆ ՄԵՔԵՆԱՅՈՎ ԾԵԾԵԼԸ

Զիան մեքենայով ծեծելու բրիգադներ կազմեմելիս պետք ե հաշվի առնել նույն պայմանները, ինչ հիշվեց բարդ մեքենայով ծեծելու վերաբերմամբ։

Չորս ձիանի մեքենայով ծեծելիս բրիգադի թվական կազմը պետք ե լինի հետեւյալը։

Թմբուկին խուրճ տրվող 1 բանվ. Խուրձեր արձակող և թմբուկի սեղանին տվող 2—3 »

Թմբուկի տակից դարձանը թափ տվող ու գեն

զցող (յեթե դարձան թափ տալու մեքենայական հարմարություն կա, այդ աշխատանքի

կարիքը չկա) 4 »

Դարմանը դեպի դեղի տեղը տանող 3—4 »

Դարմանի դեղ դնող 2 »

Զի քշող 1 »

Հնդամենը 13—15 բանվ.

Բացի այդ, ձիան մեքենայով ծեծելիս անհրաժեշտ ե բանվորների մի խմբակ կազմակերպել 4—6 հոգուց՝ հատիկը քամհարելու համար այն հաշվով, վոր մի որում քամհարվի այն բոլոր հատիկը, ինչ նույն որում ծեծում ե մեքենան։

ԾԵԾԵԼՈՒ Ա.Ց. ԶԵՎԵՐ

Մեզնում առհասարակ ծեծում են «ջառջառով» կամ կամով։ Վորպես տեխնիկապես յետամասց ձևեր, դրանք կոլտնաեսությունները չպիտի կիրառեն։

Զեռքով ծեծելու բրիգադներ պետք ե կազմակերպել յուրաքանչյուր կուտուրայի (արևածաղիկ, յեղիպտացորեն, կենափ, վուշ և այլն) առանձնահատկություններին համապատասխան։ Բրիգադի ընդհանուր կազմը 25 հոգուց ավելի չպիտի լինի։

VI. ԱՇԽԱՆԱՑԱՆԻ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Աշխանացանի բրիգադները կազմակերպելիս հիմնականում պետք է ղեկավարվել նոոյն կանոններով, ինչ ցել անելու բրիգադներ կազմակերպելիս։ Բառ վորում տրակտորային բրիգադում բանվորների կազմը (տրակտորներից զատ) պետք է համապատասխանի տրակտորներին կցված շարքացանների թվին։ Զիան բրիգադում անհրաժեշտ ե մի լուծին յերեք բանվոր ունենալ (մեկը վարում ե ձին, մյուսի ձեռքին ե առաջնակի ղեկը, իսկ յերրորդը հետևում ե շարքացանին):

VII. ՇԱՐՔԱՀԵՐԿ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շարքահերկ կուլտուրաների բերքահավաքի բրիգադներ կազմելը պետք է խստիվ համապատասխանի յուրաքանչյուր կուլտուրայի (կարտոֆիլ, ճակնդեղ, կենափ, բամբակ և այլն) առանձնահատկություններին։

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԲԵՐՔՀԱՎԱՔԸ

Բանվորների հիմնական կազմը պիտի առնվի կարտոֆիլը հանելու և հավաքելու աշխատանքը կատարելու չափով։

Որինակ, կարտոֆիլը հատուկ գութանով հանելիս՝ 10 ձին պահանջում են 20 բանվոր, յուրաքանչյուր լուծին 2 բանվոր (1-ը վարում ե ձին և 1-ը բռնում գութանի մաճը): Բանվորական 10 ժամյա որում բանվորների այս խմբակը 10 հեկտար տարածությամբ կարտոֆիլ կհանի։ Կարտոֆիլն ակոսներից հավաքելու և սայլերը լցնելու համար մի հեկտարին անհրաժեշտ

ե 10 հոգի, կամ 100 հոգի 10 հեկտարին, Բրիգադի հիմնական կազմն այսպիսով պիտի բաղկանա 120 հոգուց (20 հոգի — կարտոֆիլ հանել, և 100 հոգի — կարտոֆիլ հավաքել):

Բացի այդ, կարտոֆիլը փոխադրելու, մառանը կամ կարտոֆիլի հասուկ պահեստները լցնելու համար պետք է խմբակներ կազմակերպվեն։ Դրա համար սայլերի թիվը վորոշվում ե նայած արտի հեռավորության և կարտոֆիլի բերքատվության։

ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒԴԵՐԻ ԲԵՐՔՀԱՎԱՔԸ

Արմատավորուդների, ինչպես և կարտոֆիլի բերքահավաքը յերկու ինքնուրույն աշխատանքից ե կազմված — հողից հանել և արտից փոխադրել։

Արմատավորուդներն հողից հանելու ձևից, դրանց տեսակից և բերքահավաքի ժամանակամիջոցից ե կախված նաև բրիգադի կազմը։

ՃԱԿՆԴԵՂԱՀԱՎԱԿԸ ԱՇԽԱՏԵԼԸ

Ճակնդեղը ճակնդեղահանով հանելիս քառաձի ճակնդեղահանների քանակը բրիգադում 10-ից ավելի չպիտի լինի։ Այս դեպքում բրիգադը կազմված կլինի 40 ձիյում և 30 բանվորից։ Այդպիսի բրիգադի որական արտադրողականությունը, 10 ժամյա տևողությամբ, պիտի 15 հեկտարից պակաս չլինի։

ՇԱ.ԲԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԸ ԶԵՐՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ՀԱՆԵԼԸ

Ճակնդեղը ճեռքի տարբեր գործիքներով ե հանվում (բահով և այլն), տերևները և պոչերը կտրվում, մաքրվում, կույտեր ե դրվում և բազկաթերով (ճակիկով) ծածկվում ե։ Բրիգադի կազմը պիտի 25 հոգի

լինի, որական մի հեկտար արտադրողականությամբ,
յեթե հեկտարի բերքատվությունը 250 ցտնաների յե
հալվասար:

ՀՈՂԻ ՄԵԶ ՅԵՐԵՍ ՆՍՏԱԾ ԿԵՐԻ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ
ԲԵՐՔՀԱՎԱՔԸ

Հողի մեջ յերես նստած կերի արմատապտուղները
(եկենդորֆի ճակնդեղը և այլն) հավաքում են գետ-
նից ձեռքով հանելով: Բրիդադի կազմը պիտի 20 հոգի
լինի՝ 10 ժամյա բանվորական որով, մի հեկտարից
400 ցենտներ բերքով, 2 հեկտար որական արտադրո-
ղականությամբ: Տերեները և պոչերը կտրելը, մաք-
րելը, կույտեր դնելը և բազկաթերով (ճավիկով)
ծածկելը նույն բրիգադի գործն ե:

ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արմատապտուղների բերքահավաքի բոլոր բրիգադ-
ները լրացվում են արմատապտուղները փոխադրող
խմբակներով: Վերջիններիս կազմակերպությունը վոչն-
չով չի տարբերվում կարտոֆիլ տեղափոխելու բրի-
գադների կազմակերպությունից:

ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՌԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ
ՓՈԽԵՐՈՒԹՅ

Խմբակի բանվորների թիվը պետք ելինի այնքան,
վոր մի որվա ընթացքում փոխադրած արմատապտղի
ամբողջ քանակը նույն որում կարելի լինի տեղափո-
րել: Յեթե նույն որում արմատապտուղի մի մասը
չի տեղափորվում, պետք ե դա կույտ արվի և հարդով
ծածկվի:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ԲԵՐՔՀԱՎԱՔԸ

Արևածաղկի բերքահավաքի ժամանակ գլուխները
կտրվում և ցողունների վրա յեն անցկացվում: Բրի-
գադի կազմը 25-ից ավելի չպիտի լինի, որական վոչ
պակաս քան 5 հեկտար արտադրողականությամբ:

Փոխադրության կազմակերպումը սովորականն ե
(այսինքն պիտի հաշվի առնվի արտի հեռավորությունը
և փոխադրելի բերքի քանակը):

ՅԵԳԻՊՏԱՅՈՐԵՆԻ ԲԵՐՔՀԱՎԱՔԸ

Ձեռքով և հավաքվում: Բանվորների թիվը 25
հոգի յեւ: Արտադրողականությունը, միջին բերքի պայ-
մաններում, 3 հեկտար և բանվորական 10 ժամյա
որում: Փոխադրությունը սովորականն ե:

ԿԵՆԱՖԻ ԲԵՐՔՀԱՎԱՔԸ

Կենաֆի բերքահավաքը յերկու ինքնուրույն աշխա-
տանքներից ե բաղկացած — սերմի կնգուղների բերք-
հավաք և ցողունների հունձ:

ԿԵՆԱՖԻ ԿՆԳՈՒՂՆԵՐԻ ՀԱՎԱՔԸ

Հավաքը բրիգադներով ե կազմակերպվում — 20-
ական հոգուց: Նրանց արմադրողականությունը (յեթէ
կենաֆը թելի ու մասամբ միայն սերմի համար ե
մշակվում) 2 հեկտար և 10 ժամյա բանվորական որում:

ԿԵՆԱՖԻ ՑՈՂՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԸ

Ցողունները հնձում են մանգաղներով: Բրիգադը
20 հոգուց ե կազմվում վոչ պակաս քան 1 հեկտար
արտադրողականությամբ 10 ժամյա բանվորական
որում: Փոխադրությունն սովորականն ե:

Հունդավոր բամբակի չանաքը սովորաբար յերկու ամիս ե տևում, քանի վոր կնգուղները հավասարաշափ ու միաժամանակ չեն բացվում։ Դրա համար ել միենույն հողամասում բերքը պետք ե միենույն բրիգադները չանաքեն։ Դրանց կազմը 35-ից ավելի չպիտի լինի մի բրիգադում։ Բանվորական 10 ժամյա որում բրիգադի արտադրողականությունը մի հեկտար ե՝ բամբակի լրիվ չանաքի և ցողունների (չոփերի) հավաքի դեպքում։ Իսկ յեթե մասնակի չանաք ե կատարվում, արտադրողականությունը համապատասխան չափով ավելանում ե։

**Բ. ԿԱՅԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ
ԿԱԶՄԸ**

Այն կոլտնտեսություններում, վորոնց դաշտերը ընդարձակ են, ու դրա համար ել անխուսափելիորեն հեռու յեն գյուղերից, բրիգադները նպատակահարմար չե, վոր ամեն որ գործից գյուղ վերադառնան։ Այդպիսի դեպքերում, փոխանակ բրիգադների փոխադրության վրա իդուք ժամանակ կորցնելու, պետք ե դաշտում բրիգադների կայան կազմակերպել։ Մարդկային ուժը և նյութերը տնտեսելու համար մի կայան ե կազմակերպվում՝ մի քանի բրիգադներ սպասարկելու համար։ Բրիգադի մասնակիցների աշխատանքին արտադրողականությունը բարձրացնելու համար անհրաժեշտ ե հասարակական սնունդ կազմակերպել։ Հասարակական սնունդ ունենալու դեպքում կայանի սպասարկող անձնակազմի որինակելի թիվը հետևյալն ե։

1. Կայանի վարիչ (դաշտային մառանապետ)։
2. Խոհարար — մի հոգի։
3. Խոհանոցի աշխատող — 60 մարդուն մի հոգի։
4. Խմելու և տրակտորների համար ջրկիրներ — մի կայանին 2—3 հոգի (սայլերով), նայած ջրի հեռավորությանը կայանից։

5. Ավագ ախոռապան — կայանին մի հոգի:
 6. Ախոռապան — 20 ձիան կամ 30 յեղան մի հոգի:
 7. Լծասարկի վարպետ — կայանին մի հոգի:
 8. Դարբին — կայանին մի հոգի:
- Կայանին սպասարկող անձնակազմի թիվը կարող է փոփոխվել ըստ տեղական պայմանների և առանձնահատկությունների:

Գ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԴԱՇՏԱՎԱՐ (ճյուղի վարիչ)

Ընդհանուր ծանոթություն տնտեսության իրեն հանձնված ճյուղի կազմակերպչական և տեխնիկական կառուցվածքի հետ: Զանազան աշխատանքների տեխնիկական առանձին ձևերի իմացություն և դրանց ի կատար ածում: Գործնականապես կարողանալ վորոշել կատարված աշխատանքի վորակն ու քանակը: Բանվորներին զանազան աշխատանքների բաշխել կարողանալ, գյուղատնտեսական ինվենտարների կազմի հետ ծանոթ լինել և կարողանալ դրանք ուացիոնալ կերպով ու առավելացույն եֆեկտով շահագործել: Լավ գրագիտություն, ներքին կարգ ու կանոնի իմացություն: Աշխատանքի բոլոր տեսակների կազմակերպում: Տնտեսության հանձնարարված ճյուղի ղեկավարություն: Կատարված աշխատանքների մասին վարչությանը հաշվետվություն ներկայացնել:

2. ՄԵՔԵՆԱԳԵՑ-ՀՐԱՀԱՆԳԻՉ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՐՔ

Կատարելությամբ գիտենալ տրակտորների և գյուղատնտեսական զանազան տեսակի մեքենաների ու գործիքների աշխատանքն ու կոնստրուկցիան: Տրակ-

տորային բրիգադների աշխատանքի ղեկավարություն գաշտում և տրակտորների ամրող աշխատանքի համար պատասխանատվություն։ Տրակտորների աշխատանքի վրա հսկողություն, զրանց աշխատանքի բոլոր դեֆեկտները նկատել ու վերացնել։ Տրակտորների աշխատանքի և նյութերի ծախսման (այդ աշխատանքի վրա) հաշվառման ղեկավարություն։ Դաշտային շարժական արհեստանոցի աշխատանքի կառավարումն ու ղեկավարությունը։ Հսկողություն ապահովության տեխնիկայի հարմարությունների սարք վիճակի վերաբերամբ։ Հսկողություն արտադրանքի նորմերի կատարման վերաբերամբ և այդ նորմաներից յեղած շեղումների հաշվառում։

3. ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ ԲՐԻԳԱԴԻՐԸ

Դյուլատնտեսի և դաշտավարի ցուցումների կատարում։ Այն աշխատանքների անմիջական ղեկավարություն, վոր կատարում են բրիգադը ու բրիգադին ամրացված տրակտորիստները և ավագ տրակտորիստները։ Հետեւ, վոր տրակտորիստները ճշտությամբ ու բարեխիղճ կերպով կատարեն մեքենաների խնամքին վերաբերող հրահանգները և պահպանի դիսցիպլինը։ Գործի գուրս յեկող մեքենաների զննումն և նկատված թերությունների վերացումն։ Մեքենաները աշխատանքից հետո զննել և տրակտորիստից ընդունել։ Հսկել, վոր բրիգադը ունենա այն բոլորը, ինչ անհրաժեշտ ե անընդհատ ու արդյունավետ աշխատանքի համար՝ ջուրը, փառելու, քսելու և այլ նյութերը իր ժամանակին բերվեն։ Աշխատանքների և նավթամթերքների, այլև պարապուրդների, մասերի

ծախսման և նյութերի նորոգման հաշվառում։ Տրակտորիստների աշխատանքի դուրս գալու աղյուսյակը կազմելը։

4. ՏՐԱԿՏՈՐԻՑՏԸ

Տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների նվազ բարդ մասերի հավաքման, սարքելու և սոուզելու աշխատանքի կատարում։ Գյուղատնտեսական մեքենաների կազմության հետ ծանոթություն և նրանց վրա աշխատել կարողանալ։ Փականագործական վհչ բարդ աշխատանքների կատարում՝ վհչ շատ բարդ մեքենաների և գործիքների ինչպես նորոգման, նույնապես և նոր մասեր գցելու վերաբերմամբ։ Գյուղատնտեսական ինվենտարի սպասարկում և նորոգում՝ այդ ինվենտարն աշխատելու ժամանակ և դրա նորոգման վորակի համար պատասխանատվություն։ Տրակտորի վրա աշխատել և տրակտորների վառելանյութերի, քսելու նյութերի ու աշխատանքի հաշիվ պահել։ Տրակտորների քանդելը, մաքրելը, հավաքելը ու սարքելը և տրակտորների հիմնական նորոգման աշխատանքներին մասնակցելը։

5. ԶԻԱՆ ՑԵՎ ԶԵՌԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՐԻԳԱԴԻՆԵՐԸ

Դաշտավարից կամ արտադրական շրջանի լիազորից արտադրական առաջադրանքներ ստանալը։ Բրիգադի համար աշխատողներ ընտրելը։ Աշխատողներին հատուկ աշխատանքների բաշխելը՝ նրանց վորոշ լուծեր, ինվենտար, լծասարք հատկացնելով։ Անասունն ու մեքենաները վորոշ կարգով դասավորելը։ Աշխատանքի դուրս գալու, ընդմիջումների և հանգստի ժա-

մանակը վորոշելը՝ համաձայն ընդունված կարգ ու կանոնի: Հսկել, վոր բրիգադի աշխատողները իր ժամանակին աշխատանքի դուրս գան: Աշխատանքի վորակն ստուգելը: Հսկել, վոր գյուղատնտեսական գործիքներն ու մեքենաները իր ժամանակին մաքրեն: Արտադրանքի նորման կատարելու վրա հսկել: Հսկել, վոր պարապուրդներ չլինեն և շտապ միջոցների դիմել դրանց առաջն առնելու համար: Ախոռապահների աշխատանքը ստուգել: Հսկել, վոր իր ժամանակին պարաստ լինի աշխատավորների տաք կերակուրը և վերջինս լավորակ լինի: Հսկել, վոր բրիգադի անսառունը, ինվենտարը և նյութերը լավ պահվեն ու չկորչեն: Ինչպես առանձին աշխատողների, նույնպես և ամբողջ բրիգադի աշխատանքը հաշվի առնել: Աշխատանքային պաշտամ դիսցիպլինը ապահովել և վարչության կամ լիազորին հայտնել դիսցիպլինի խախտման դեպքերի մասին: Ամեն որ բանավոր զեկուցումներ տալ դաշտավարին:

6. ԽՈՏՃԱՐԻ ՎՐԱ. ԱՇԽԱՏՈՂԸ

Հսկել, վոր մատները պինդ ամրացված լինեն շերտին և իրենց ամրացված թիթեղիկներով մի գծի վրա դասավորված լինեն: Հսկել, վոր դանակը ճիշտ դիրք ունենա և դանակի ատամի միջին գիծը «մեռյալ կետի» դիրքով գուգագիպի մատների միջին գծին: Հսկել, վոր մատնաձողը ճիշտ դիրք ունենա, վոր նա կարգավորի զսպանակի կամ դայկայի և պտուտակի միջոցով:

Հսկել, վոր անուրը և կողափոկերը լավ նստեն: Հսկել, վոր մեքենան հարկ յեղած բարձրությամբ հնձի: Դրսի և ներսի հենարանը կանոնավորելով, մատնաձողը այս կամ այն կերպ ուղղել՝ նայած

հնձվող խոտը ինչ դիրքով և կանգնած և խոտհարքի մակերեսը ինչպես ե: Կտրող ապարատը բարձրացնել՝ վոտքով պեղալին սղմելով՝ վոչ մեծ արգելքների հանդիպելիս և խստ շրջադարձերի ժամանակի: Հսկել վոր իր ժամանակին (ժամը մի անգամ) մաքրվի ու յուղվի միացնող ձողի գլխիկը, դանակի գլխիկը, մատնաձողի վրայի ամրացնող մասերը և դանակի հենարանը: Մնացած շարժական մասերը, բացի ատամավոր անիվներից, յերկու ժամը մի անգամ յուղել: Հսկել, վոր յուղելու բոլոր անցքերը ծածկված լինեն կափարիչով կամ խցանով: Հսկել, վոր կանգնելիս խոտհարը յետ դրվի այնքան, վոր դանակը խոտին կպչելուց մի մետր հեռու լինի: Դանակը սրել 4—5 ժամը մի անգամ: Խոտհարը տեղափոխելիս հսկել, վոր ուժի փոխանցումը անջատվի՝ մատնաձողը դանակի հետ միասին վեր բարձրացնելով. զգույշ լինել խոտհարը դաշտով և խորդ ու բորտ տեղերով տանելիս: Խոտհարի աշխատանքներից հետո խոտհար մեքենան քանդել, սպիտակ նավթով մաքրել կեղտը ու հին յուղը, ապա բոլոր չներկված մասերը ճարպ կամ մեքենայի յուղ քսել, վորից հետո մեքենան հավաքել: Պատասխանատու լինել ստացած պահեստի մասերի անկորուստ պահպանման համար: Հսկել, վոր խոտհարին լծված անասուններին հավասարաչափ ուժ հասնի: Ինվենտարին և բանող անասունին հոգատար վերաբերունք ցույց տալ:

7. ՅՆՁՈՂ. ՅԵՎ. ԽՈՒՐԶ ԿԱՊՈՂ. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎՐԱ. ԱՇԽԱՏՈՂԸ

Կտրող ապարատի խնամքը նույնն ե, ինչ խոտհարինը: Փոցխերի ընթացքը կարգավորել կարողա-

Նալ: Աշխատանքը վերջանալուց հետո հնձող մեքենայի թևերը ամրացնել:

Հունձի բարձրության կարդավորում: Աշխատանքը վերջանալուց հետո հնձող մեքենան պլատֆորմի վրա բարձրացնել:

8. ՄԱՆՈՂԻԸ

Գութանները զննել և յուղել աշխատանքից առաջ ու ինչպես գութանները, նույնպես և լծասարքը սարք վիճակում պահպանել: Անասունը և լուծի սարքերը աշխատանքի վայր ուղարկել, յերբ բրիգադիրը ազդանշան կտա: Հսկել, վոր անասունները վարի ժամանակ հավասարաշափ բեռնավորվեն: Սովորությունն ու լայնությունը կարգավորել: Հսկել, վոր վարի վորակը լավ լինի, կամ չժողնվի, ակոսները չծովեն: Գութանները ժամանակին յուղվեն և մաքրվեն կպած ցեխ ու հողից և կեղտից: Շրջադարձի ժամանակ գութանը հողից հանել և ապա հողի մեջ դցել: Աշխատանքի ժամանակ գութանի և լծասարքի թեթև նորոգումները տեղն ու տեղն անել: Անասունն ու գութանը պատշաճ վիճակում պահել և հոգատար լինել անասունի վերաբերմամբ:

9.- ՑԱՐԱՆՈՂԻԸ

Աշխատանքից առաջ զննել ցաքանի և լծասարքի գրությունը: Անասունը լծել ու աշխատանքի տանել, յերբ բրիգադիրը ազդանշան կտա: Հսկել, վոր ցաքանելիս անասունների բեռնավորումը հավասարաշափ լինի: Ցաքանը մաքրել ըստ կարիքի: Հոգատար լինել անկորունքի վերաբերմամբ: Անասունը, ցաքանը և լծասարքը անկորուստ և պատշաճ վիճակում պահել:

10. ՑԱՆՈՂԻԸ

Նախ քան աշխատանքը, — շարքացանը զննել (խուփիկները բարձրացնող լծակի, ցանող ապարատի ստուգումը, խուփիկների դասավորումը, առաջնամասի անիվերի դասավորումը):

Յուղել մի առանցքակալի տանող անիվերի առանցքը՝ տանող գլանի և այն ձողի ձախ ծայրում, վորի վրա պատում ե փոխանցող ատամնավոր անիվը (փոխանցող ատամնավոր անիվերը և ցանող ապարատները վոչ մի դեպքում չեն յուղվում և շարունակ պետք ե մաքուր մնան): Հսկել ցանող ապարատի աշխատանքին, սերմը ցանվելու հավասարաշափության և այն բանին, վոր սերմնարկղը վահ պակաս քան կեսը սերմ լցված լինի: Խոփիկներն ըստ կարիքի մաքրել: Հսկել աշխատանքի վորակին, վոր շատ խիտ չցանվի և չցանված տեղեր չմնան: Հսկել սերմի վորակի վրա: Շարքացանի աշխատող մասերը յուղել աշխատանքի ժամանակ: Սերմը սերմնարկղը լցնել: Խոփիկներն ու ցանող ապարատը անջատել շրջադարձերի և տեղափոխությունների ժամանակ: Հսկել, վոր գործի կեսին կանգ առնելուց հետո ցանքը նորոգելիս՝ շարքացանը մի մետր յետ տարվի: Սերմնարկղի միջից ավելորդ անցքերը ծածկել, յերբ անհրաժեշտ ե շարքացանի առը նեղացնել, յեթե գործի վերջում ցանելու ներ շերտ ե մնում: Աշխատանքը վերջանալուց հետո շարքացանը մաքրել կեղտից, ատամները լվանալ սպիտակ նավթով ու շորով մաքրել, այլ և սերմնարկղը և ցանող ապարատը մաքրել սերմից ու փոշուց:

11. ՇԱՐՔԱՅԱՆԻ Ա.ՌԱԶՆԱԿԻ ԴԵԿԱԿԱԼԻ

Հսկել շարքացանի ուղիղ՝ (ուղղագիծ) ընթացքին։
Ամեն մի նոր գործի ժամանակ շարքացանը ճիշտ
ուղղել (անպայման շարքացանի յետեի անփի հետքով,
վոր մասցել ե նախորդ անգամ շարքացանի գնալուց)։
Ամեն անգամ գործի գցելիս հետեւ, վոր ցանքն
ուղիղ գծով արվի։

12. ԳԾՈՂԸ

Աշխատանքից առաջ քննել լծասարքի վիճակը։
Անասունը լծել ու գործի տանել բրիգադիրի ազգա-
նշանով։ Աշխատանքի ժամանակ լծասարքի մանր նո-
րոգում կատարել։ Ոգնել ցանողին շարքացանի ար-
կղը սերմ լցնելիս։ Հսկել ցանքի գծի ուղղության,
այլև հետեւ, վոր շատ նոսր կամ շատ խիտ ցցանիի։
Պահպանել իր և առջևով գնացող լուծի միջն
պատշաճ սարածությունը։ Հոգատար վերաբերվել
անասունին։ Հետեւ, վոր անասունն ու լծասարքը
անկորուստ պատշաճ դրությամբ պահպանվեն։

13. ԿԾՅԱՆԻ ՎԱՐԻՉԸ

Կայանի համար վայր ընտրել և կայանը կազմա-
կերպել։ Կայանը տնտեսական անհրաժեշտ ինվեն-
տարով (վրաններ բրեգենաւներ, ջրի տակառներ, դույ-
լեր, պղինձներ, բանող անասունի համար մսուրներ,
ջրելու կուռեր, և այլն) և նյութերով ապահովել։ Նյու-
թեր, մեքենաներ և այլն ընդունել, պահպանել և բաց
թողնել։

14. ՊԱՀԵՍՏԻՑ ԴԱՇՏ ՄԵՐՄ ՓՈԽԱԴՐՈՂԸ

Լիազորի պատվերով պահեստից բրիգադի աշխա-
տավայրը սերմ հասցնել։ Սերմը բրիգադիրին հասցնել։

Սերմացուի փոխադրման որական վորոշված նորման
ամեն որ կատարել։ Միջոցներ ձեռք առնել սերմի
փչացման առաջն առնելու համար (սերմը բրեգենսով
ծածկել և այլն)։ Հոգատար լինել ձիյերի կամ յեղների
վերաբերմամբ։ Սայլը յուղել ըստ կարիքի։ Ձիյերը
կամ յեղները ժամանակին ջրել, ինչպես ձանա-
պարհին, նույնպես և կայաններում։ Սայլի բեռնա-
վորման նորման պահպանել և ավելի չբառնալ։ Թէ
բարձված և թէ դատարկ ժամանակ սայլը վորոշվա-
ծից ավելի արագ չըշել։

15. ՄԵՐՄԸ Ա.ՐՏԵՐԸ ՓՈԽԱԴՐՈՂԸ (ՅԵԹԵ
ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ Ե)

Բրիգադիրի ցուցմունքով սերմը փոխադրել հո-
ղամասի վորոշ վայրերը և դա հանձնել ցանողներին։
Հոգատար լինել բանվոր անասունի, սայլի և ինվեն-
տարի վերաբերմամբ։ Բանող անասունը ժամանակին
ջրել։ Սայլը յուղել ըստ կարիքի։

19. ԱՎԱԴ ԱԽՈՌԱՊԱՆ (ՖՈԽՄԱԺԻՐ)

ԿԵՆՊԱՆԻՆԵՐԻ հետ լավ վարվել կարողանալ։ Խըս-
տիվ հսկել, վոր այն բոլոր աշխատողները, վորոնք
բանող անասունների հետ գործ ունեն, հոգատար
լինեն դրանց վերաբերմամբ։ Վճռականապես արգելել
կենդանիներին ուժեղ խփել խարազանով, մտրակով,
ձիպոտով և այլն։ Թույլ չտալ, վոր սայլերը նորմայից
ավելի չափով բարձվեն։ Ախոռապանների աշխատանքը
(կենդանիների խնամք, կեր տալը, մաքրելը և այլն)
ղեկավարել։ Կեր (ուժեղ և կուշտ) ստանալ, պահել

և բաց թողնել։ Անասունները ընդունել և աշխատանքի բաց թողնել։ Հսկել, վոր անասունները կանոնավոր լծվեն։ Հսկել անասունների առողջության, կուշակերպվելու և աշխատունակության վրա։ Պատասխանատու լինել լծասարքի և իրեն հանձնված ինվենտարի անկորուստ և սարք պահպանման վերաբերմամբ։ Գումերում հերթապահները նշանակել։ Հսկել, վոր անասունն իր ժամանակին կերակրվի, ջրիվ և գոմմ իր ժամանակին մաքրվի։ Հսկել անասունների կապին ընդմիջումների ժամանակ։ Ապահովել բրիգադի կայանում փուրաժի յուրաժամանակ ստացումը։ Հսկել կերի յուրաժամանակ պատրաստման։ Ապահովել մսուրաների, կուռերի, դաշտերի և այլն անհրաժեշտ քանակը։ Կենդանիներին դժբախտ դեպքերում ողնություն հասցնել։ Կենդանիների լուրջ հիվանդության դեպքում անասնաբույժ հրավիրել։ Առանց բրիգադիրի թույլտվության անասուններ չտալ ինքնակամ։

17. ԱԽՈՌԱԳԱՆ

Իրեն հանձնված մինչև 20 դլուխ անասունները խնամել։ Կենդանիներին իր ժամանակին և կանոնավոր կեր տալ ու ջրել։ Ախոռի աղբը մաքրել։ Լծասարքը կանոնավոր վիճակում պահել։ Անասունը բաց թողնել աշխատանքի և ընդունել նրան աշխատանքից հետո։ Անասուններին կեր բաժանել հաստատված նորմայով և վորոշված ժամանակին։ Գոմում հերթական որապահություն անել։ Ավագ ախոռապահի (փուրաժիրի) դեկապարությամբ ժամանակավոր մսուրներ, կուռեր, տաշտեր և այլն դնել։

18. ԶՐԿԻՐԸ

Իր ժամանակին հարկ յեղած քանակով խմելու ջուր հասցնել բրիգադի կայանը։

Անասունների և ինվենտարի հետ խնամքով վարվել։ Ամեն որ ջրի տակառը լավ լվանալ։ Զուր լցնել կուռերը անասունը ջրելու համար։ Սայլը յուղել ըստ կարիքի։ (Հեթե ջուրը բրիգադի կայանին մոտ ե, այդ դեպքում ջրկիրը, բրիգադիրի համաձայնությամբ, կարող ե ավագ ախոռապահի կողմից ողտագործվել կեր փոխադրելու կամ գոմի աշխատանքներում։

19. ԽՈՀԱՐՄԱՆ

Իր ժամանակին լավորակ և համեղ կերակուր պատրաստել։ Կերակրի բաժիններ ստանալ, պահել և ծախսել։ Վառելիք ստանալ, պահել և ծախսել։ Սեղանի և խոհանոցային ինվենտար ստանալ ու պահպանել։ Հսկել ամանեղենի մաքրության, դեկապարել խոհանոցում աշխատողի գործը։

20. ԽՈՀԱՆՈՑՈՒՄ ԱՇԽԱՏՈՂԸ

Յեփելու մթերքները պատրաստել։ Բանջարեղենը մաքրել։ Վառելիք պատրաստել։ Պղինձները լվանալ և կրակ անել։ Կերակուր մատուցել։ Ամանեղենը, սրբիչները և այլն լվանալ։

21. ԼՆԱՐԱՐՔԻ ՎԱՐՓԵՏԸ

Թամք և այլ լծասարք պատրաստել և նորոգել։ Լծասարքի նորոգման համար անհրաժեշտ նյութեր և ինեվենտար ձեռք բերել։ Պարբերաբար յերկու յերեք

որը մի անգամ ձիյերը լծելու ամբողջ լծասարքը, հատկապես անուշները նայել, վորոշելու, թե արդյոք անուշի չափը համապատասխան է տվյալ ձիյուն: Թերություններն անմիջապես վերացնել համապատասխան նորոգմամբ կամ անուշը տվյալ կենդանուն հարմարեցնելով: Հսկել լծասարքի պահպանման կարգին՝ բրիգադների կայանում:

(Նայած լծասարքի վարպետների և բրիգադների թվին, մի փորձված վարպետ և նշանակվում մի քանի բրիգադին: Լծասարքի վարպետը կուտնաեսության վարչությանն և յենթարկվում):

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

22. ԴԱՐԲԻՆԸ

Շարժական դարբնոց սարքավորել՝ դաշտում գյուղատնտեսական ինվենտարը ընթացիկ և միջակ նորոգման յենթարկելու համար։ Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների համար պահեստի մասերի անհրաժեշտ քանակ ապահովել։ Պայտելու նյութերի և քարածուխի անհրաժեշտ պաշար ունենալ։ Զիյերը պայտել ըստ կարիքի. իրեն հանձնված բոլոր նյութերն ու ինվենտարը անկորուստ պահպանել։

Մի դարբինը մի քանի ըրիգադների համար ենչանակվում:

23. ՄՅՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մյուս բոլոր աշխատողները պարտավոր են աշխատանք կատարել բրիգադի բների ցուցմունքներով:



«Ազգային գրադարան»



NL0205956

ՆԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



33133

30. 554

10 ԿՈՊ.

Цена 10 к.



БИБЛИОРЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Инструкция
хлебоцентра

На армянском языке

Պահեստում կա կոլխոզային բարմ գրականություն

Պ. Ա. Հ. Ա. Ն. Զ. Ե 8 Ե-Փ

ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, Վ. Ո. Պ.
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶԲԻ.

ԴԻՄԵԼ Մոսկվա, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10.